

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՄԻՋԵՎ

Երևան

09.12.2017թ.

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը (այսուհետ՝ Դատախազություն), ի դեմս ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան (այսուհետ՝ Կոալիցիա), ի դեմս Կոալիցիայի քարտուղարության համակարգող Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ Կարեն Զադոյանի (այսուհետ՝ Կողմեր),

*հիմնվելով ՀՀ գլխավոր դատախազության և հասարակական կազմակերպությունների միջև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում համագործակցության նախկին փորձի վրա,*

*հաշվի առնելով, որ համագործակցության առաջնահերթություններից է համարվում տեղեկատվության փոխանակման խորացմամբ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտմանը, հակակոռուպցիոն օրենսդրության խախտումներ թույլ տված անձանց հայտնաբերմանը նպաստելը,*

*նկատի ունենալով, որ համատեղ խնդիրների արդյունավետ լուծումը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության կազմակերպմամբ, ինչպես նաև կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի նոր ուղղությունների մշակմամբ,*

*կարևորելով հակակոռուպցիոն ոլորտի շարունակական բարեփոխումների իրականացումը, կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային իրավական փաստաթղթերով նախատեսված ու միջազգային լավագույն փորձից բխող կառուցակարգերի ներդրումը, որպես քաղաքական և վարչական կոռուպցիայի նվազեցման արդյունավետ գործիքներ,*

*ընդգծելով կոռուպցիայի դեմ պայքարի հարաբերությունները կարգավորող ոլորտում արդեն ընդունված և ընդունվելիք նորմատիվ ակտերի վերաբերյալ կայացվող որոշումները հրապարակային և թափանցիկ դարձնելու, լուսաբանելու, կյանքի կոչելու գերակայությունը,*

*առաջնային համարելով կոռուպցիայի դեմ պայքարում իրավապահ մարմինների գործունեության, ինչպես նաև այս ուղղությամբ քաղաքացիական հասարակության հետ թափանցիկության, հրապարակայնության և գործընկերայնության սկզբունքներով համագործակցության նկատմամբ հանրային վստահության բարձրացումը,*

*սույն Համագործակցության հուշագրով (այսուհետ՝ Հուշագիր) համաձայնվեցին հետևյալի մասին.*

ՀՈՒՇՎԱԾ 1

Հուշագրի նպատակները

Կողմերի համագործակցությունը իրականացվում է հետևյալ նպատակներով.

- նպաստել Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը,
- աջակցել Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը,
- բարձրացնել քաղաքացիների՝ կոռուպցիայի դեմ պայքարի անհրաժեշտության, այդ պայքարի միջոցների և արդյունքների վերաբերյալ իրազեկության մակարդակը,
- նպաստել կոռուպցիայի դեմ պայքարում ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերի և իրավունքների պաշտպանությանը,
- նպաստել հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացմանը, այդ թվում՝ կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենսդրության ընթացակարգային և համակարգային փոփոխությունների կատարմանը:

## *ՀՈՂՎԱԾ 2*

### *Համագործակցելու ընդհանուր պարտավորությունը*

Կողմերը համագործակցություն են իրականացնում ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն Համաձայնագրի դրույթների հիման վրա՝ գործելով իրենց իրավասության շրջանակներում և առաջնորդվելով հրապարակայնության, օրինականության և ինքնուրույնության սկզբունքներով:

## *ՀՈՂՎԱԾ 3*

### *Համագործակցության հիմնական ուղղությունները*

Կողմերը համաձայնվում են համագործակցել հետևյալ ուղղություններով.

Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ապահովում,

Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացում,

հակակոռուպցիոն ոլորտում իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցության զարգացում,

քաղաքացիների՝ կոռուպցիայի դեմ պայքարի անհրաժեշտության և այդ պայքարի միջոցների վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացում, Դատախազության և Կոալիցիայի կողմից հակակոռուպցիոն ոլորտում կատարված աշխատանքների և դրանց արդյունքների ներկայացում,

կոռուպցիայի դեմ պայքարում ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերի և իրավունքների պաշտպանության ապահովում,

հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացում, կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման գործում համագործակցության զարգացում, այդ թվում՝ միջազգային փորձի համեմատական վերլուծությունների իրականացման և այլ փորձագիտական աջակցության տեսքով,

կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենսդրության համապատասխան բարեփոխումների առաջարկությունների ներկայացում:

*ՀՈԴՎԱԾ 4*  
*Համագործակցության ձևերը*

Սույն համաձայնագրի դրույթների կատարման նպատակով, Կողմերի համագործակցությունը իրականացվում է հետևյալ ձևերով.

- հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացման, այդ թվում հակակոռուպցիոն կառուցակարգերի և իրավական ակտերի մշակման նպատակով համատեղ աշխատանքային խմբերի ստեղծում, հակակոռուպցիոն բարեփոխումներին նվիրված համատեղ աշխատաժողովների, համաժողովների և այլ մասնագիտական միջոցառումների կազմակերպում,
- ոլորտին առնչվող օրենքների և ենթօրենսդրական ակտերի թերությունների և բացերի, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործունեության տեսակների բացահայտում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից, այդ թվում ազդարարման էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացված դիմում բողոքների, վերլուծության կամ իրականացված անմիջական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա, ինչպես նաև դրանք քննարկելու և լուծումներ առաջարկելու նպատակով համատեղ սեմինարների, աշխատանքային քննարկումների կազմակերպում,
- քաղաքացիների հակակոռուպցիոն ընկալման և իրազեկության բարձրացման, քաղաքացիներին կոռուպցիայի դեմ պայքարի միջոցներին և արդյունքներին իրազեկելու նպատակով.
  - Դատախազության կողմից տարեկան կտրվածքով հրապարակվելիք կոռուպցիոն հանցագործությունների քննության վերաբերյալ՝ ՀՀ դատախազության հաղորդման մեջ ներկայացվող տեղեկատվության համատեղ աշխատանքային քննարկման կազմակերպում յուրաքանչյուր տարվա ապրիլ ամսվա ընթացքում:
  - կատարված կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ յուրաքանչյուր տարի պարբերաբար մարզային համատեղ աշխատանքային քննարկումների կազմակերպում՝ մարզային դատախազների, իրավապահ մարմինների մարզային ստորաբաժանումների և մարզերում գործող Կոալիցիայի անդամ կազմակերպությունների մասնակցությամբ,
  - զանգվածային լրատվության միջոցներով հակակոռուպցիոն բովանդակությամբ իրազեկման նյութերի հրապարակում,
  - դատախազության համաձայնությամբ սոց.կայքերում հակակոռուպցիոն բովանդակությամբ իրազեկման նյութերի հրապարակում,
  - այս ուղղություններով համատեղ այլ մասնագիտական միջոցառումների կազմակերպում:
- ՀՀ գլխավոր դատախազի կամ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի և Կոալիցիայի անդամ կազմակերպությունների մասնակցությամբ տարեկան առնվազն երկու անգամ ոչ պաշտոնական հաղիսումների կազմակերպում,
- համատեղ աշխատանքային քննարկումների կազմակերպում Կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ Կոալիցիայի և/կամ Կոալիցիայի շրջանակներում գործարկվող Հակակոռուպցիոն կենտրոնների կողմից ներկայացված ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմում-բողոքներին ընթացք տալու և դրանք բավարարելու օրենքով նախատեսված ընթացքը ճշտելու օրակարգերով,

- Կոալիցիայի շրջանակներում գործարկվող Հակակոռուպցիոն կենտրոնների գործունեության համատեքստում.
  - Կողմերից մեկի առաջարկության դեպքում փոխադարձ համաձայնությամբ Գլխավոր դատախազի կամ նրա հանձնարարությամբ այլ դատախազի մոտ խորհրդակցության անցկացում՝ Հակակոռուպցիոն կենտրոնների և Դատախազության համատեղ գործունեության ընթացակարգերը քննարկելու համար,
  - բացահայտված առանձնահատուկ կոռուպցիոն դեպքերի հանրայնացմանը զուգահեռ և մինչև օրենսդրորեն նախատեսված այլ ընթացակարգերի ապահովումը, համատեղ քննարկումներ ծավալել կոռուպցիոն տարրեր ընդգրկող դեպքերի կապակցությամբ՝ համատեղ եզրահանգումներ ստանալու ակնկալիքով,
  - Դատախազությունը իր իրավասության շրջանակներում ընթացք է տալիս Կոալիցիայի և/կամ Կոալիցիայի շրջանակներում գործարկվող Հակակոռուպցիոն կենտրոնների կողմից Դատախազությանը հասցեագրած առաջարկություններին, դիմումներին, ինչպես նաև աջակցում է ֆիզիկական և իրավաբանական անձանց կոռուպցիոն ռիսկեր պարունակող բողոքների ընթացակարգերին առնչվող հնարավորինս ամբողջական տեղեկատվության տրամադրմանը:
  - Կոալիցիան, իր շրջանակներում գործարկվող Հակակոռուպցիոն կենտրոնների միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձանց ընձեռում է հնարավորություն՝ արձանագրելու իրենց հանդիպած կոռուպցիոն դեպքերը և դրանց վերաբերյալ բողոքներ ներկայացնելու Դատախազություն, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, համապատասխան ֆինանսավորման առկայության դեպքում անվճար իրավաբանական աջակցություն է տրամադրում ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ վերջիններիս դիմումների ընթացքին օժանդակելու նպատակով:
- համատեղ աշխատանքային հանդիպումների և խորհրդատվությունների անցկացում՝ սույն Համաձայնագրի հիման վրա համագործակցության արդյունավետության բարձրացման և ամրապնդման հարցերի քննարկման նպատակով:

#### *ՀՈՂՎԱԾ 5*

#### *Համագործակցության այլ ձևերը*

Կողմերը համաձայնում են, որ սույն Հուշագիրը չի բացառում համագործակցության այլ ձևերի հնարավորությունը, որոնք նշված չեն Համաձայնագրում, բայց համապատասխանում են նրա նպատակներին:

#### *ՀՈՂՎԱԾ 6*

#### *Համագործակցության զարգացումը*

Սույն Հուշագիրը կողմերին չի խոչընդոտում սահմանելու և զարգացնելու համագործակցության փոխադարձորեն ընդունելի այլ ուղղություններ և ձևեր՝ պահպանելով սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածով նախատեսված պայմանները:

*ՀՈՒՎԱԾ 7*

*Համագործակցության համակարգումը*

Սույն Հուշագրով սահմանված համագործակցությունը համակարգում և վերահսկում են Կողմերի ղեկավար մարմինները՝ լիազորված անձանց միջոցով:

*ՀՈՒՎԱԾ 8*

*Փոփոխություններ և լրացումներ*

Սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ միայն Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

*ՀՈՒՎԱԾ 9*

*Տարաձայնությունների կարգավորում*

Տարաձայնությունները, որոնք կարող են առաջանալ սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման կապակցությամբ, լուծվում են խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով:

*ՀՈՒՎԱԾ 10*

*Եզրափակիչ դրույթներ*

Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Սույն Հուշագրի գործողությունը կդադարեցվի Կողմերից որևէ մեկի՝ համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր որոշման մասին մյուսին գրավոր ծանուցելուց երեք ամիս հետո:

Սույն Հուշագիրը ստորագրվել է Երևան քաղաքում 2017 թվականի դեկտեմբերի 9-ին, կազմված է 6 էջից, հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակներից:

ՀՀ գլխավոր դատախազ

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն  
կոալիցիայի քարտուղարության  
համակարգող

---

*Արթուր Դավթյան*

---

*Կարեն Զադոյան*